



**Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը  
«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություն և  
լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի  
վերաբերյալ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2020 թվականի օգոստոսի 19-ին հանրային քննարկման են դրվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների և «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումների նախագծերը<sup>1</sup> (այսուհետ նաև՝ Նախագծեր):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դրական է գնահատում Նախագծերով նախատեսված կարգավորումները՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս առաջնային բժշկական զննության, առողջության պահպանման իրավունքի հասկացության ընդլայնման, կյանքից զրկելու կամ վնաս պատճառելու միջոցների հասանելիության բացառման, ինքնավնասման համար պատժախուցը որպես կարգապահական տույժ կիրառելու պրակտիկայի վերացման մասին:

Վերոնշյալ հարցերը միջազգային փաստաթղթերով սահմանված բանտային կանոններին համապատասխանեցնելու նպատակով ներկայացնում ենք դիտարկումներ և առաջարկություններ՝ քննարկման դրված Նախագծերի որոշ կարգավորումների վերաբերյալ:

*1. Անչափահասներին պատժախուց տեղափոխելը*

Նախագծերի հիմնավորման մեջ նշված է, որ նախատեսվում է իրավական արգելք անչափահասներին պատժախուց տեղափոխելու համար, սակայն կարգավորումների հարցում առկա է որոշակի անհստակություն և հակասություն այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի՝ որոշակի խումբ անձանց պատժախուց տեղափոխելու արգելք նախատեսող նորմերում՝ համապատասխանաբար 97-րդ հոդվածի 4-րդ մասում և 27-րդ հոդվածում, ի թիվս այլ սուբյեկտների անվանումների, «անչափահաս» բառով լրացում չի նախատեսվում:

<sup>1</sup> <https://www.e-draft.am/projects/2681>



ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4. Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախաձննդյան կամ հետձննդյան ժամանակահատվածում գտնվող դատապարտյալը պատժախուց չի տեղափոխվում»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց, որպես տույժի միջոց, պատժախուց տեղափոխելն արգելվում է»:

«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենսգրքի 95-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի 3-րդ կետից նախատեսվում է հանել *«խսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով»* բառերը:

«ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Որոշմամբ հաստատված հավելվածի 227-րդ կետում *«գտնվող»* բառից հետո լրացվում է *«անչափահաս»* բառը»:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծով սահմանված կարգավորմամբ ուղղակի վերացվել է անչափահասի՝ պատժախցում պահվելու ժամկետային սահմանափակում նախատեսող դրույթը, մինչդեռ արգելող նորմ նախատեսվել է միայն ենթաօրենսդրական ակտում՝ «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման մեջ:

Նման հանգամանքներում առաջանում է հակասություն, քանի որ պատժախուց տեղափոխելն արգելող թվով 3 օրենսդրական ակտերով նախատեսվում են տարբեր կարգավորումներ՝ անձանց տարբեր շրջանակ, ընդ որում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանվում է անձանց ավելի լայն շրջանակ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին»:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք փոփոխության ենթարկել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը՝ լրացնելով «անչափահաս» բառով:*

## *2. Մենախցում գտնվելու ժամանակ անձի իրավունքները*

«Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատապարտյալն ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի, ուղղիչ հիմնարկների*

**ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքերից, թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու իրավունք ունի: Դատապարտյալի աշխատանքը կազմակերպվում է՝ հաշվի առնելով դատապարտյալին խցում պահելու՝ ներքին կանոնակարգով սահմանված պահանջները»:**

Վերոնշյալ նորմի վերլուծությունից բխում է, որ Նախագծով սահմանվել է մեկուսացված դատապարտյալի ընդամենը երկու իրավունք՝

1. ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք,
2. ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքերից, թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու իրավունք:

Նշված կարգավորումը հակասում է միջազգային իրավակարգավորումներին: Եվրոպական բանտային վերանայված կանոնների<sup>2</sup> համաձայն՝ բանտարկյալին այլ բանտարկյալներից առանձնացման դեպքում՝ որպես անվտանգության կամ պաշտպանության հատուկ միջոցի կիրառում, պահպանվում են ներքոնշյալ դրույթները.

- մեկուսացված բանտարկյալներին պետք է վերապահվի օրական նվազագույնը երկու ժամ իմաստալից մարդկային շփումների իրավունք,
- մեկուսացման որոշմամբ պետք է հաշվի առնվեն նաև բանտարկյալների առողջական վիճակը և ցանկացած անկարողություն, որը բանտարկյալները հնարավոր է ունենան և որը նրանց կդարձնի առավել խոցելի մեկուսացման վնասակար հետևանքների նկատմամբ,
- մեկուսացումը կարող է կիրառվել նվազագույն այնպիսի ժամկետով, որն անհրաժեշտ է մեկուսացման նպատակներին հասնելու համար և պարբերաբար պետք է վերանայվի՝ այդ նպատակներին համապատասխան,
- մեկուսացված բանտարկյալների իրավունքները չպետք է ենթարկվեն այնպիսի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք անհրաժեշտ են առանձնացման հիմքում դրված նպատակներին հասնելու համար,
- մենախուցը պետք է համապատասխանի բանտարկյալների այլ խցերի նկատմամբ սույն Կանոններում կիրառվող նվազագույն չափանիշներին,
- որքան ավելի երկար է բանտարկյալը մեկուսացված մյուս բանտարկյալներից, այնքան ավելի շատ քայլեր պետք է ձեռնարկվեն առանձնացման բացասական հետևանքները մեղմելու համար՝ առավելագույնի հասցնելով կապը այլ բանտարկյալների հետ և ապահովելով նրանց համար պայմաններ/հարմարություններ և զբաղմունք.

<sup>2</sup>Recommendation Rec(2006)2-rev of the Committee of Ministers to member States on the European Prison Rules (Adopted by the Committee of Ministers on 11 January 2006, at the 952<sup>nd</sup> meeting of the Ministers' Deputies and revised and amended by the Committee of Ministers on 1 July 2020 at the 1380<sup>th</sup> meeting of the Ministers' Deputies)  
[https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016809ee581](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016809ee581)

- բանտարկյալները, նվազագույնը պետք է ապահովվեն գրականությամբ և մեկ ժամ զբոսանքի հնարավորությամբ, համաձայն Կանոն 27.1-ի և 27.2-ի,
- մեկուսացված բանտարկյալներին ամեն օր պետք է այցելեն բանտի բժիշկը կամ բժշկի անունից՝ բժշկական անձնակազմի այլ անձ,
- այն դեպքում, երբ մեկուսացումը բացասաբար է անդրադառնում բանտարկյալի ֆիզիկական կամ հոգեբանական վիճակի վրա, պետք է քայլեր ձեռնարկվեն՝ կանխելու մեկուսացումը կամ այն փոխարինելու նվազագույն խիստ միջոցով.
- ցանկացած բանտարկյալ պետք է իրավունք ունենա բողոքարկելու մեկուսացման որոշումը՝ Կանոն 70-ով սահմանված կարգով:

53.8 կանոնի համաձայն՝ «Միջոցները պետք է հիմնված լինեն միայն առկա վտանգի վրա, համաչափ լինեն այդ վտանգին և նախատեսեն սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են վտանգը հաղթահարելու համար»:

ՄԱԿ-ի «Բանտային պլանավորման տեխնիկական ուղեցույցի» համաձայն՝ «Խոցելի բանտարկյալները զբաղվածությունից, հարմարություններից, ծառայություններից օգտվելու նույն չափ հավասար հնարավորություններ պետք է ունենան, ինչ այլ բանտարկյալները»<sup>3</sup>:

ԵԽ նախարարների կոմիտեի թիվ (2006) 2 հանձնարարականի համաձայն՝ «51.1 Առանձին բանտարկյալների նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումները պետք է սահմանափակվեն այն նվազագույնով, որն անհրաժեշտ է նրանց՝ ազատագրկման անվտանգությունն ապահովելու տեսանկյունից»:

Ոչ մի ազատագրկված անձ չպետք է հանդիսանա հոգեբանական կամ ֆիզիկական բռնության զոհ կամ ունենա բռնության վախ այլ ազատագրկված անձի կամ վարչակազմի անդամի կողմից: Հաճախ բանտային իշխանությունների կողմից միտում է նկատվում որպես հարցի լուծում սահմանափակել խոցելի խմբերի զբաղվածությունը՝ մեկուսացնելով բանտարկյալին: Այս ամենի հավանական հետևանքով նման բանտարկյալները պահվում են շատ սահմանափակ ռեժիմով՝ չունենալով զբաղվածության այն տեսակները, որոնք հասանելի են մնացյալ բանտարկյալներին: (...) **Սկզբունքորեն չկա որևէ պատճառ, թե ինչու խոցելի խումբը չպետք է կարողանա ամբողջությամբ մասնակցություն ունենա բանտային ժամանցին:** «Սեփական անվտանգության ապահովման համար» մենախցում առանձնացնելը պետք է հանդիսանա վերջին միջոցը, որը կիրականացվի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Որպես առաջին միջոց, իշխանությունները պետք է հստակեցնեն իրենց սեփական գործողություններով և կարգավորումներով, որ խոցելի բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքը պետք է արգելվի, որի խախտման դեպքում անձինք պետք է ենթարկվեն պատասխանատվության<sup>4</sup>:

<sup>3</sup>TECHNICAL GUIDANCE FOR PRISON PLANNING, UNITED NATIONS OFFICE FOR PROJECT SERVICES (UNOPS) Copenhagen, 2016, p. 95.

<sup>4</sup>European Prison Rules, Council of Europe Publishing, 2006, p. 125.



Վերոգրյալից պարզ է դառնում, որ մեկուսացումը պետք է հանդիսանա վերջին և ծայրահեղ միջոցը, երբ բանտարկյալի անվտանգության ապահովմանն ուղղված բանտի վարչակազմի ջանքերն արդյունք չեն տալիս, իսկ մեկուսացումը չի կարող զուգակցվել իրավունքների այնպիսի սահմանափակումներով, որոնք չեն բխում ազատագրված անձի անվտանգության ապահովման նպատակից: Մեկուսացման դեպքում ազատագրված անձն ունի իրավունքների այն նույն ծավալը, ինչ մյուս ազատագրված անձինք: Այսպիսով, Նախագիծը, վերապահելով մեկուսացված դատապարտյալին ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքերից, թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու իրավունքները, չի ապահովում դատապարտյալի իրավունքների այն նույն ծավալը, որը նա ունեցել է մինչ մեկուսացումը: Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ամրագրել, որ մենախցում մեկուսացված դատապարտյալների իրավունքները երաշխավորված լինեն նույն ծավալով, ինչ մյուս դատապարտյալներին:

Մեկ այլ կարևոր հանգամանք. համաձայն «Եվրոպական բանտային կանոնների» 53Ա կանոնի «h» կետի՝ «մեկուսացված բանտարկյալներին ամեն օր պետք է այցելեն բանտի բժիշկը կամ այլ անձ՝ բժշկական անձնակազմից բժշկի անունից»:

Համաձայն «Եվրոպական բանտային կանոնների» 43.2 կանոնի՝ «Բժիշկը կամ որակավորված բուժքույրը պետք է հասկացնեն հատուկ ուշադրություն մենախցում գտնվող բանտարկյալների առողջության պահպանմանը, պետք է այցելեն ամեն օր և բանտարկյալների կամ վարչակազմի դիմումի հիման վրա ապահովեն անհետաձգելի բուժօգնություն և սպասարկում»:

Նախագծում բացակայում է նաև սույն կարգավորումը, որն այն նվազագույն երաշխիքներից է, որը պարտադիր ենթակա է ամրագրման:

*Այսպիսով, միայն զբոսանքի և գրականությունից օգտվելու իրավունքի սահմանումը դատապարտյալի համար, ամբողջությամբ հակասում է «Եվրոպական բանտային կանոնների» 53Ա կանոնի «d» կետին: Նախագծով պետք է սահմանվի դրույթ, համաձայն որի՝ մեկուսացված դատապարտյալներն ունենան նույն իրավունքներն, ինչ մյուս դատապարտյալները, միաժամանակ ամրագրելով, որ մենախցում գտնվող դատապարտյալներին յուրաքանչյուր օր պետք է այցելեն բժիշկ և հոգեբան:*

Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատապարտյալը կարող է մենախցում առանձնացվել ոչ ավել, քան անընդմեջ տասնհինգ օր: Նշված ժամկետը լրանալուց առնվազն երկու օր առաջ, դատապարտյալի կողմից նոր դիմում ներկայացնելու պարագայում, մենախցում առանձնացման տևողությունը քրեակատարողական հիմնարկի պետի, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի պատճառաբանված որոշմամբ, կարող է երկարաձգվել ևս տասնհինգ օրով, բայց ոչ ավել, քան 6 անգամ՝ մեկ տարվա ընթացքում»:

«Եվրոպական բանտային կանոնների» 53Ա կանոնի «f» և «i» կետերը նույնպես հաշվի առնված չեն Նախագծով: Մասնավորապես, Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է մեկուսացման ժամկետի երկարաձգման հնարավորություն, այն էլ 6

անգամ, սակայն ամրագրված չէ որևէ երաշխիք՝ մեկուսացման բացասական հետևանքները մեղմացնելու համար, որը պահանջվում է Եվրոպական բանտային 53Ա կանոնի «f» կետով՝ **«որքան ավելի երկար է բանտարկյալը մեկուսացված մյուս բանտարկյալներից, այնքան ավելի շատ քայլեր պետք է ձեռնարկվեն մեկուսացման բացասական հետևանքները մեղմելու համար՝ ավելացնելով բանտարկյալի շփումը, ապահովելով հարմարություններով և զբաղվածությամբ»**։

Նախագծում բացակայում են այն կարգավորումները, թե ինչպես պետք է վարվի վարչակազմն այն դեպքում, երբ մեկուսացումը բացասաբար է անդրադառնում բանտարկյալի ֆիզիկական կամ հոգեբանական վիճակի վրա, մինչդեռ Եվրոպական բանտային կանոնները նման դեպքերում պարտավորեցնում են քայլեր ձեռնարկել՝ կանխելու մեկուսացումը կամ փոխարինելու այն նվազագույն խիստ միջոցով։

Համաշխարհային առողջապահական կազմակերպության Ընդհանուր ժողովն արձանագրել է անձի ֆիզիկական և հոգեբանական վիճակի վրա 15-օրը գերազանցող մեկուսացման բացասական հետևանքների խնդիրը<sup>5</sup>։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարծում ենք, որ 6 անգամյա երկարաձգման հնարավորությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որը անձը 90 օր անընդմեջ գտնվի մենախցում, ինչն անթույլատրելի է և հանդիսանում է մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք և տառապանք պատճառող պատժի հատկանիշ։ **Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկում ենք կրճատել Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի երկարաձգման 6-անգամյա հնարավորությունը՝ ժամկետի երկարաձգում թույլատրելով առավելագույնը 3 անգամ, որին զուգահեռ, համաձայն վերը վկայակոչած դիրքորոշման, անպայմանորեն ապահովվել մեկուսացման բացասական հետևանքները մեղմող երաշխիքներ, ընդ որում, յուրաքանչյուր երկարաձգման դեպքում՝ ավելի ինտենսիվորեն։**

### 3. Մենախցում առանձնացվելու կարգը և պայմանները

«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազատազրկման դատապարտված անձի դիմումով նրա կամ նրա խցակիցների անձնական անվտանգությանն սպառնացող վտանգի դեպքում դատապարտյալը կարող է առանձնացվել մենախցում»։ Քրեակատարողական հիմնարկի պետին ներկայացվող դիմումով դատապարտյալը պետք է հիմնավորի իր անձնական անվտանգությանն սպառնացող անմիջական վտանգի առկայությունը։ Ազատազրկման դատապարտված անձի դիմումը մերժվում կամ բավարարվում է քրեակատարողական հիմնարկի պետի, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի պատճառաբանված որոշմամբ։

<sup>5</sup>World Medical Association, “WMA Statement on Solitary Confinement” (Adopted by the 65th WMA General Assembly, Durban, South Africa, October 2014, and amended by the 70th WMA General Assembly, Tbilisi, Georgia, 27 October 2019)



Փաստորեն, նշված կարգավորմամբ նախատեսվել է դատապարտյալի կողմից իր անձնական անվտանգությանն սպառնացող անմիջական վտանգի առկայությունը հիմնավորելու պարտականություն: Անհասկանալի է, թե ինչպես կարող է դրվել դատապարտյալի վրա սեփական անվտանգությանը սպառնացող վտանգի հիմնավորման պահանջ և գործնականում ինչպես կարող է հիմնավորել դատապարտյալն իրեն սպառնացող վտանգն այն դեպքում, երբ գերձնշող դեպքերում նշվածն անհնար է ապացուցել՝ սպառնալիքի օբյեկտիվ իրականության մեջ որևէ նյութական արտահայտություն չունենալու հիմքով: Ստացվում է, որ մենախցում դատապարտյալի առանձնացման դիմումը կարող է գնահատվել որպես «չհիմնավորված» այն դեպքերում, երբ դատապարտյալը որևէ ապացույց չի ունենա ներկայացնելու՝ իր անձնական անվտանգությանն սպառնացող անմիջական վտանգը: Բացի այդ, անհասկանալի է, թե որն է անմիջական վտանգը: Այն գնահատման ենթակա հասկացություն է, որի չափորոշիչները տրված չեն Նախագծով:

Անձը չպետք է հիմնավորի իր անվտանգության նկատմամբ առկա սպառնալիքը: Քրեակատարողական հիմնարկի անձնակազմի պարտավորությունն է նման սպառնալիքների հիմնավորումը կամ մերժումը: Անկախ անձի դիմումից՝ ուղղիչ հիմնարկի ղեկավարությունը պետք է իր որոշմամբ, եթե ունի հիմնավոր կասկածներ անձի անվտանգությանն սպառնացող վտանգների մասին, միջոցներ ձեռնարկի կանխելու այդ սպառնալիքները, դրանք առաջացնող պատճառները, այդ թվում նաև՝ սեփական նախաձեռնությամբ անձին մեկուսացնելու վերաբերյալ որոշում կայացնելու հարցում:

***Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ դատապարտյալի վրա իրեն սպառնացող վտանգը հիմնավորելու պարտականություն ղեկն անհամաչափ և անիրագործելի է: Նշված սահմանափակումը խաթարում է դատապարտյալի՝ իր անձնական անվտանգությանն սպառնացող վտանգի դեպքում մենախուց տեղափոխվելու դիմում ներկայացնելու և վերջինիս բավարարումը ստանալու իրավունքը:***

***Առաջարկում ենք սահմանել, որ անձի անվտանգությանն սպառնացող վտանգ լինելու հիմնավոր կասկածի դեպքում, ուղղիչ հիմնարկի ղեկավարությունը ձեռնարկում է միջոցներ՝ կանխելու այդ սպառնալիքները, դրանք առաջացնող պատճառները, այդ թվում նաև՝ սեփական նախաձեռնությամբ անձին մեկուսացնելու վերաբերյալ որոշում է կայացնում:***

Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կարգավորումը չի հստակեցնում, թե քրեակատարողական հիմնարկի պետն ինչ ժամկետում պետք է որոշում կայացնի դատապարտյալի՝ մենախցում մեկուսացման դիմումին ի պատասխան: Քանի որ մենախցում մեկուսացման հիմքում դրված է դատապարտյալի անվտանգությանն սպառնացող վտանգը՝ կանխելու նպատակը, այդ հարցը ենթակա է քննության և որոշումը ենթակա է կայացման՝ հնարավորինս սեղմ ժամկետում:

***Այս կապակցությամբ առաջարկում ենք հստակ ամրագրել, որ քրեակատարողական հիմնարկի պետը դիմումի կապակցությամբ որոշումը կայացնում է անհապաղ:***



#### 4. Իրավական որոշակիության սկզբունքը

«ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ «Որոշմամբ հաստատված հավելվածի Ձև N 2-ը լրացվում է նոր՝ 9.1 կետով հետևյալ բովանդակությամբ. Ինքնասպանության և (կամ) ինքնավնասման ռիսկային խմբին դասվող ազատությունից զրկված անձանց՝ պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի, փողկապ, շեղք, պատուհանավանդակի ձող, կտրող-ծակող կամ ցանկացած այլ առարկա կամ միջոց, որը կարող է վնաս պատճառել անձի կյանքին կամ առողջությանը»:

«ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը կիրառելի է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և տրամադրման հետ կապված հարաբերությունների դեպքում այնքանով, որքանով այն իր էությամբ կիրառելի է սույն իրավահարաբերությունների նկատմամբ»:

Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշման մեջ նշել է, որ «(...) Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ՀՀ Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում (...):»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630): Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի. իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՍԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):





«Ցանկացած այլ առարկա կամ միջոց, որը կարող է վնաս պատճառել անձի կյանքին կամ առողջությանը» եզրույթը բավարար չափով որոշակի և հստակ չէ, նշված ձևակերպմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն Որոշմամբ հաստատված հավելված Ձև N 2-ում կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ ունենալու, ստանալու կամ ձեռք բերելու արգելված իրերի և առարկաների ցանկ սահմանելը դառնում է ինքնանպատակ, քանի որ նշված ցանկը սահմանելիս օրենսդիրը ևս, որպես ելակետ, ընդունել է կալանավորված անձանց և դատապարտյալների կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող իրերի շրջանառությունը սահմանափակելու նպատակը, սակայն որոշակի է դարձրել այդ առարկաները, որպեսզի անձինք կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ և ձեռնպահ մնալ նշված առարկաներն ստանալուց, ձեռք բերելուց կամ ունենալուց, միչդեռ «ցանկացած առարկա» սահմանելու դեպքում անհայտ է, թե որ առարկաները կարող են վտանգ ներկայացնել կյանքին կամ առողջությանը, անհայտ է նաև, թե ով է գնահատելու նշված առարկաների՝ վտանգ ներկայացնելու հատկանիշը:

Ինչ վերաբերում է «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում սահմանված «այնքանով, որքանով այն իր էությանը կիրառելի է» եզրույթին՝ հայտնում ենք, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորում է **մարդու** առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, կանխարգելման, իրավական, տնտեսական և ֆինանսական հարցերի, ինչպես նաև բժշկական արտադրատեսակների շրջանառության հետ կապված հարաբերությունները»:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից բխում է, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքն «իր էությամբ» կիրառելի է **մարդու** բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հարաբերությունների վրա և չկա որևէ նշում, որ այն չի տարածվում ձերբակալվածների և կալանավորված անձանց վրա, այլ ցանկացածի՝ քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ձերբակալված, կալանավորված և այլն:

Նման հանգամանքներում հարց է ծագում՝ ո՞ր դեպքերում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը տարածվում կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և տրամադրման հետ կապված հարաբերությունների նկատմամբ, ո՞ր դեպքերում է «իր էությամբ կիրառելի» սույն իրավահարաբերությունների նկատմամբ: Այս հարցերի պատասխանները չի պարունակում Նախագիծը, ինչը կրկին առաջացնում է իրավական որոշակիության խնդիր, քանի որ հստակ և կանխատեսելի չեն այն դեպքերը, երբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը կարող է կիրառվել կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և տրամադրման հետ կապված հարաբերությունների նկատմամբ: Բժշկական օգնության և սպասարկման իրավական բովանդակությունը կազմող բոլոր

բաղադրիչներից, օրենքի համաձայն, օգտվում են հավասարապես արգելանքի վերցված, ձերբակալված և կալանավորված, ինչպես նաև ազատագրվման վայրերում պատիժ կրող անձինք:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին հոդվածից հանել «ցանկացած այլ առարկա կամ միջոց, որը կարող է վնաս պատճառել անձի կյանքին կամ առողջությանը» բառակապակցությունը՝ փոխարենը անհրաժեշտության դեպքում հստակ սահմանել այն առարկաների ցանկը, որոնք ողջամտորեն չեն կարող օգտագործվել ինքնավնասման կամ ինքնասպանության նպատակով:*

*Խմբագրել և փոփոխել «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ նախատեսելով, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը կիրառելի է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և տրամադրման հետ կապված հարաբերությունների դեպքում»:*

### 5. Բժշկական զննության անցկացման կարգը

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.

«9. Կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելիս **նախնական բժշկական զննությունը** սահմանված կարգով անցնում են կարանտինային բաժանմունքում: Կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ ընդունելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, իրականացվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների **նախնական ուսումնասիրություն** բուժաշխատողի կողմից: Կալանավորված անձի կամ դատապարտյալի ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների նախնական ուսումնասիրություն իրականացվում է նաև դատարանից կալանավորվածների պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ վերադառնալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:»:

ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի թիվ N 825-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «8-րդ կետում առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Կալանավորվածների՝ պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ ընդունվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում,

իրականացվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների նախնական ուսումնասիրություն բուժաշխատողի կողմից: Կալանավորված անձի կամ դատապարտյալի ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների նախնական ուսումնասիրություն իրականացվում է նաև դատարանից կալանավորվածների պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ վերադառնալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:»:

Նախ և առաջ, ցանկանում ենք նշել, որ կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ ընդունելուց հետո պարտադիր բժշկական զննություն անցնելու կապակցությամբ ներպետական օրենսդրությունն ունի ներքին հակասություններ և շեղումներ՝ ստանձնած միջազգային պարտավորություններից: Առաջինի կապակցությամբ հայտնում ենք, որ մի շարք իրավական ակտերում օգտագործվում է ընդունվելուց հետո «բժշկական զննություն» անցնելու կարգավորումը, մեկ այլ դեպքում՝ «նախնական բժշկական զննություն»: Այս առումով սույն Նախագծերն էլ ավելի են խորացնում այդ հակասությունները և առաջացնում շփոթություն:

Քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու և ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված անձը բժշկական զննություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում, որտեղ նա գտնվում է կալանքի տակ պահելու համար սահմանված պայմաններում»:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ «9. Կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելիս՝ նախնական բժշկական զննությունը սահմանված կարգով անցնում են կարանտինային բաժանմունքում»:

ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի թիվ N 825-Ն որոշման 8-րդ կետի համաձայն՝ «8. Կալանավորված անձը՝ կալանավորվածներին պահելու վայր (այդ թվում՝ տարանցմամբ), իսկ դատապարտյալը քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս՝ բժշկական զննություն անցնելու նպատակով տեղափոխվում են կարանտինային ստորաբաժանում»:

Նույն որոշման 11-րդ կետի համաձայն՝ «11. Բժշկական զննությունը ներառում է կալանավորված անձի կամ դատապարտյալի՝

- 1) նախնական բժշկական զննությունը, որն ընդգրկում է՝
  - ա. արտաքին զննությունը,
  - բ. հոգեբուժական վկայարկումը,

գ. առողջական վիճակի վերաբերյալ գանգատների առկայության պարզումը՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի վերաբերյալ հարց ու պատասխանի միջոցով,

դ. խորհրդատվությունը.

2) ֆյուրորոգրաֆիկ հետազոտությունը՝ կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելուց հետո բժշկի կողմից ցուցման առկայության դեպքում՝ 72 ժամվա ընթացքում:

Քրեակատարողական օրենսգիրքը, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքը և ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի թիվ N 825-Ն որոշումն օգտագործում են «բժշկական զննություն» եզրույթը, մինչդեռ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշումը ամրագրում է «նախնական բժշկական զննություն» եզրույթը: Ընդ որում, համաձայն ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի թիվ N 825-Ն որոշման, նախնական բժշկական զննությունը ներառվում է բժշկական զննության մեջ և հանդիսանում դրա բաղկացուցիչ տարրը միայն:

Ակնհայտ է, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշումը հակասում է հավասարազոր և առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին»: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում **«նախնական բժշկական զննություն»** բառերը պետք է փոխարինել **«բժշկական զննություն»** բառերով:

Սակայն, նշվածը միայն ներպետական օրենսդրությունում առկա իրավական կարգավորման հակասության խնդիր չէ, այլև գործնականում խնդրահարույց, ինչպես նաև միջազգային պարտավորություններից էապես շեղվող հարց, որի մասին տարիներ շարունակ բարձրաձայնել է Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեն:

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Կոմիտեի թիվ CPT/Inf (2016) 31 զեկույցի համաձայն՝ «Կոմիտեն վերստին կրկնում է հանձնարարականը, որ ՀՀ իշխանությունները ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր երաշխավորելու համար, որ նոր բանտարկյալները ընդունելությունից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ենթարկվեն համալիր բժշկական զննության պրոֆեսիոնալ բժշկական անձնակազմի կողմից»<sup>6</sup>:

<sup>6</sup> Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, par. 81

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Կոմիտեի թիվ CPT (2010) 82 զեկույցում նշվել է, որ «106. Այցելած քրեակատարողական հաստատություններում ազատությունից զրկված անձինք տվյալ քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուց կարճ ժամանակ անց ենթարկվել էին բժշկական զննության: Այնուամենայնիվ, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձինք **անցնում էին մակերեսային նախնական բժշկական զննություն (օրինակ՝ չէին ենթարկվում ֆիզիկական զննության):**107. ԽԿԿ-ն ցանկանում է հիշեցնել, որ քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունները կարող են և պետք է էական դերակատարություն ունեննվ վատ վերաբերմունքի կանխման գործում: Հետևաբար, Կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է անում մանրամասն ցուցումներ տալ բուժանձնակազմին՝ ազատությունից զրկված անձանց բժշկական զննության ենթարկելու առնչությամբ: Մասնավորապես.

i) քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուն պես՝ բժշկական զննության առնչությամբ,

➤ դրանք երբեք չպետք է իրականացվեն ոստիկանության ուղեկցող անձնակազմի ներկայությամբ,

➤ եթե անձը վնասվածքներ է ստացել հնարավոր վատ վերաբերմունքի պատճառով, դրա մասին միշտ պետք է անհապաղ ծանուցվի համապատասխան դատախազին, և նրան փոխանցվի վնասվածքների մասին զեկույցը: Անազատության մեջ գտնվող անձը և նրա պաշտպանը նույնպես պետք է իրավունք ունենան միաժամանակ ստանալու տվյալ զեկույցի պատճենը,

ii) ամեն տեսակի բժշկական զննության առնչությամբ (անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են քրեակատարողական հիմնարկ փոխադրվելիս, թե հիմնարկում տեղի ունեցած բռնության հետևանքով)

➤ ազատությունից զրկված անձանց բժշկական զննությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց լսողության, իսկ մինչև համապատասխան բուժաշխատողի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս.

➤ դրանք պետք է լինեն համապարփակ՝ ներառելով վնասվածքների համապատասխան զննությունը.

➤ նման զննության ընթացքում ազատությունից զրկված համապատասխան անձի կողմից արված հայտարարությունները, բժշկական զննության օբյեկտիվ արդյունքները և բժշկական եզրակացությունները չպետք է հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց (ազատությունից զրկված անձանց զննող բուժանձնակազմը կարող է, ըստ անհրաժեշտության, տեղեկացնել քրեակատարողական հիմնարկի անձնակազմին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց առողջական

վիճակի, այդ թվում՝ անցկացվող բուժման և առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին)»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ներպետական իրավական համակարգում և պրակտիկայում կա խնդիր՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս ազատազրկված անձինք չեն ենթարկվում համալիր/համապարփակ բժշկական զննության, այլ միայն մակերեսային կամ, ինչպես Նախագիծն է նշում, նախնական բժշկական զննություն է իրականացվում: Ընդ որում, ներպետական իրավական կարգավորումներն անկատար են նաև 24-ժամյա ժամկետում պարտադիր բժշկական զննություն անցնելու նորմ նախատեսելու առումով, ինչի պայմաններում բժշկական զննությունը փաստացի կարող է իրականացվել նշված ժամկետի խախտմամբ, մինչդեռ 24 ժամում համալիր բժշկական զննություն ապահովելու պահանջը պետք է նախատեսվի հստակ և իմպերատիվ կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել Նախագծերում օգտագործվող **«նախնական ուսումնասիրություն»** եզրույթը: Եթե ՀՀ կառավարության 26 մայիսի 2006 թվականի թիվ N 825-Ն որոշումն առնվազն բացահայտում է «նախնական բժշկական զննություն» եզրույթը, թե ինչն է այն ներառում, ապա **«կալանավորված անձի կամ դատապարտյալի ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների նախնական ուսումնասիրություն»** եզրույթը մնում է անորոշ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձանոթ հասկացություններ կամ տերմիններ: 2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: 3. Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը»:

*Առաջարկում ենք ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում սահմանված «նախնական բժշկական զննություն» և «նախնական ուսումնասիրություն» բառերը փոխարինել համապատասխանաբար «բժշկական զննություն» և «ուսումնասիրություն» բառերով՝ հստակորեն ամրագրելով բոլոր այն գործողությունները, որոնք ենթակա են իրականացման՝ ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների հայտնաբերման համար: Նաև առաջարկում ենք սահմանել, որ բժշկական զննությունը և ուսումնասիրությունը պետք է իրականացվեն կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ ընդունվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:*

## 6. Առաջարկություններ

1. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը լրացնել **«անչափահաս»** բառով:
2. Նախատեսել, որ մեկուսացված դատապարտյալներն ունեն նույն իրավունքները, ինչ մյուս դատապարտյալները, միաժամանակ ամրագրելով, որ մենախցում գտնվող դատապարտյալներին յուրաքանչյուր օր պետք է այցելեն բժիշկ և հոգեբան:
3. Կրճատել Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի երկարաձգման 6-անգամյա հնարավորությունը՝ ժամկետի երկարաձգում թույլատրելով առավելագույնը 3 անգամ, որին զուգահեռ, համաձայն վերը վկայակոչված դիրքորոշման, անպայմանորեն ապահովվել մեկուսացման բացասական հետևանքները մեղմող երաշխիքներ, ընդ որում, յուրաքանչյուր երկարաձգման դեպքում, ավելի ինտենսիվորեն:
4. Ամրագրել, որ քրեակատարողական հիմնարկի պետը դիմումի կապակցությամբ որոշումը կայացնում է անհապաղ:
5. «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին հոդվածից հանել **«ցանկացած այլ առարկա կամ միջոց, որը կարող է վնաս պատճառել անձի կյանքին կամ առողջությանը»** բառակապակցությունը, փոխարենն, անհրաժեշտության դեպքում, հստակ սահմանելով այն առարկաների ցանկը, որոնք ողջամտորեն կարող են օգտագործվել ինքնավնասման կամ ինքնասպանության նպատակով:
6. Խմբագրել և փոփոխել «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ նախատեսելով, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը կիրառելի է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և տրամադրման հետ կապված հարաբերությունների դեպքում»:
7. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում սահմանված «նախնական բժշկական զննություն» և «**նախնական ուսումնասիրություն**» բառերը փոխարինել համապատասխանաբար **«բժշկական զննություն»** և **«ուսումնասիրություն»** բառերով՝ հստակորեն ամրագրելով բոլոր այն գործողությունները, որոնք ենթակա են իրականացման՝ ինքնավնասման կամ ինքնասպանության նախանշանների հայտնաբերման համար:



8. Մահմանեյ, որ բժշկական զննությունը և ուսումնասիրությունը պետք է իրականացվեն կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:
9. Մահմանեյ, որ անձի անվտանգությանն սպառնացող վտանգ լինելու հիմնավոր կասկածի դեպքում, ուղղիչ հիմնարկի ղեկավարությունը ձեռնարկում է միջոցներ՝ կանխելու այդ սպառնալիքները, նրանց առաջացնող պատճառները, այդ թվում և սեփական նախաձեռնությամբ անձին մեկուսացնելու վերաբերյալ որոշում կայացնում: